Հրատարակվում է ամեն օր բացի երկուշաբթի եւ տօն օրերից։
Տարեկան գինն է 10 ռուբլի։
Առանձին համարներով իւրաքանչիւրը 5 կոպ.։

Խմբագրատունը բաց է ամեն օր բացի կիւրակէ եւ տօն օրերից առաւօտեան 10—2 ժամը կէսօրից յետ։

Յօդուածներ պիտի ուղղուին խմբագրութեան հետեւեալ հասցէով. Въ ред. газеты «Мегу Айастани», въ Тифлисъ, կամ Rédaction de «Meghou Haïastani» à Tiflis (Caucase).

ՀԱՅԱՍՏԱՆ

№ 224—ՈՒՐԲԱԹ 30 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1881

ՄՂԱՐԿ

Խմբագրութեանս ուղղած Թէ՛ յօդուածները եւ Թէ՛ նամակները պէտք է պարզ գրուած լինին գրողի ստորագրութեամբ եւ հասցէով. խմբագրութիւնը կարող է փոփոխել, ուղղել եւ կրճատել յօդուածները. խմբագրութիւնը իւր վերայ չէ առնում յետ ուղարկել յօդուածները եւ պահում է երկու ամիս մինչեւ ցպահանջ.

Յայտարարութիւնների համար վճարում են ամեն մի բառին 1½ կոպէկ.

Յայտարարութիւններն ընդունվում են խմբագրատանը եւ պ. Շահվերդեանի տաւիթիսնում.

Յայտարարութիւնները ընդունվում են հայերէն եւ օտար լեզուներով.

ԹԻՖԼԻՍ, 29 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1881 Թ.

ՀԱՑՈՑ ԽՆԴԻՐԸ ԵՒ «Journal d'Orient»-Ը

Ամենին պէտք է հետաքրքրէ, Թէ որտեղ Ճնաց հայոց խնդիրը. ամենքը կարդացել էին քաղաքական լրագիրներում, որ հերթակալ լսընդիրը քաղաքական աշխարհում—ինչ արեւելեան խնդրին է վերաբերում,—Բէռլինի պայմանագրի 61-րդ յօդուածն է։

«Մեղուի ընթերցողներին յայտնի է, որ Պօլսում սպասում էին մեծ պետութիւնների դեսպաններին, որ սկսեն ժողովներ կազմել հայոց խնդրի համար եւ բանակցութիւնների մէջ մտնեն Դրան հետ հայասատանում մոյնելու բարենորոգութիւնների մասին։

Եկաւ անգլիական կառավարութիւնից վիկտորիա թագուհու լիազօր դեսպանապետ լօրդ Դէօֆֆէրինը, որի առաջնորդութեամբ Բէռլինի պայմանագիրը ստորագրող տէրութիւնների ներկայացուցիչները պէտք է գործէին հայերի օգտին, կատարել տալով Դրան Բէռլինի պայմանագրի 61-րդ յօդուածը։

Դրա համար մի երկու դեսպան-ժողովներ տեղի ունեցան Պօլսում եւ դեսպանները քաղաքավարութեամբ յիշեցրին Դրան 61-րդ յօդուածի գոյութիւնը եւ Դրան իւր վերայ առած պարտաւորութիւնը հայերի վերաբերմամբ։ Դուռը ինչպէս միշտ, այնպէս եւ այդ անգամ յայտնեց իւր պատրաստականութիւնը հոգալու հայերի վիճակի բարւոքման վերայ, մանաւանդ որ իւր մշտական հոգսը եղել է իւր հպատակների բարօրութիւնը (sic!)։ Բայց լօրդ Դէօֆֆէրինը գլխաւորապէս տարբեր կարծիք ունենալով այդ մասին՝ առաջարկում է Դրան ուղարկել Հայաստան մի արտաքոյ կարգի կօմիսար, որը պէտք է հայերի չափից դուրս կրած նեղութիւններին վերջ տայ, մինչեւ որ դիսպաններն եւ Դուռը կը համաձայնուին 61-րդ յօդուածի մասին կազմելիք օրինագծի հետ։

Այս ամենս վաղուց է, որ հայ հասարակութեան յայտնի է, վերջումը յիշեցին Մուխտար-փաշային իբրեւ ընտրած կօմիսար Հայաստանի համար։ Բայց այլ եւս լուր, համբաւ, ձայն չը կայ հայոց խնդրի վերայ. դանդիգեան տեսութիւնից վերջը, զարմանալի բան, կարծէք Թէ հայոց խնդիրը մեռաւ։ Եւրոպան ընդհանրապէս եւ մեծ պետութիւնները մանաւանդ գրաւած են իրենց ուշադրութեամբ եւ միմեանց հետ ունեցած յարաբերութիւնները կարգի բերելով։ Վերջերումս Իտալիայի թագաւորի արած այցելութիւնը առանձնապէս իւր վերայ է գրաւում քաղաքական աշխարհի ուշադրութիւնը։ Եւ ինչպէս երեւում է այդ տեսութիւնը աւելի հաստատապէս անյայտութեան է պատապարտում հայոց խնդիրը։ Հիմա եւրոպական մամուլի մէջ ուշադրութեան արժանի ձայներ են բարձրանում. առաջին խնդիրը արդէն աւելի քան Թէ հարկաւոր էր լուծուած է, Բէռլինի պայմանագրի յօդուածները կատարուած են, էլ ոչինչ չէ մնում անելու, պէտք է Դրան հանգիստ թողնել, Դաշտօնը իւր յուզիչ քաղաքականութիւնովը խաղաղութեանը վտանգ է սպառնում, պէտք է նրան սանձել, նրա չնորհքով Անգլիան առանձնացած է տէրութիւնների մէջ. . . ահա այսպէս եւրոպան հայոց խնդրի մոռացին անցնելով օրախնդրին է անցնում։

Երբ արեւելեան պատերազմը վերջացաւ, որը քրիստոնեայ արեւելեան ազգերի համար էր (այդպէս էին ասում), կային ձայներ, որոնք աղաղակում էին, Թէ տաճկահայերը շատ գոհ, շատ չնորհակալ եւ երախտապարտ պէտք է լինին այդ պատերազմից եւ կային այնպիսի ձայներ, որոնք Թէպետեւ շատ հեռուից, մեղադրում էին տաճկահային, որ նա չը գիտէ իւր երախտագիտութիւնը ինչպէս հարկն է արտայայտել որ տաճկահայը շատ բարիքներ է ստանում։ Որո՞նք են այդ բարիքները.—որ տաճկահայը դարեւոր տարաբաղդութեան լուծի տակ այս վերջին արեւելեան պատերազմում ամենից աւելի տարաբաղդի նեղութիւնների հարուածներին, որ տաճկահայը այդ անելիս քրիստոնեաների օգտին կատարած պատերազմից յետոյ տասնապատիկ աւելի մեծ նեղութիւնների, մեծ զրկանքների, անպատմելի հալածանքների եւ սարսափելի տուրքերի տակ հեկեկում է. . . այդ է տաճկահայի ստացած բարիքները։ Թէ այն է, որ մեր «պրօպօգանդա» անողների չնորհքով տաճկահայերը պաշարեցին վանի բերդը, միացան Մարշմենի հետ, ամբողջ վասպուրականը առան—Թղթի վերայ ի հարկէ—և հիմայ դրա փոխարէն Դուռը Հայաստանի չը լսած, չը տեսած տեղերում գօրքերով լցրել է, և այս քաղցած և վարձ չստացող բանակները կողոպտում, թալանում են տաճկահայի տունը և ամեն բան խլում, եթէ ի հարկէ մի բան Ճնացել է պատերազմից յետոյ, այս ամենից վերայ էլ անպատում կինը, աղջիկը, տան սրբութիւնը. . . այս է տաճկահայի ստացած բարիքները։ Ա՞յս է եւրոպական լիազօր դեսպանների գործը, բարութիւնը հայերի համար։ Այսպէս է կատարվում Բէռլինի կօնգրէսսի վճիռը։ Տաճկահայը երկու բան ունէր, երկու բան կարող էր անել Եւրոպային, այն էլ նա արեց։ Մէկը՝ խնդրելը, միւսը՝ չնորհակալութիւն անելը։ Խնդրում են մէկ բան, և երբ ստանում են, դրա համար չնորհակալութիւն են յայտնում։ Մենք ասում ենք, որ տաճկահայը խնդրեց,—իւր վիճակի բարւոքումը։ Մենք ասում ենք նոյնպէս, որ նա յայտնեց—չնորհակալութիւն։ Մէկ կ'ասենք—չնորհակալութիւն։ Մէկ կ'ասենք, ինչպէս կարելի է չնորհակալութիւն յայտնել չստացած բանի համար, ուրեմն կամեցածը ստացո՞ղ է տաճկահայը։ Մենք ասում ենք, որ տաճկահայը ոչինչ չի ստացել, այլ աւելի նեղութիւնների, աւելի հալածանքների մէջ է ընկել, բայց և այնպէս յայտնել է իւր չնորհակալութիւնը։ Ի՞նչ կայ այստեղ չը հասկանալու։ Երբ աղքատը գնում է մեծատան դուռը ի՞նչ է անում։ Նա խնդրում է մի պատառ հայց։ կամ նրան չեն լսում, կամ նրան դուրս են անում, կամ ասում են.—«Աստուած տայ, Աստուած տայ»։ Ի հարկէ աղքատն էլ հասկանում է, որչափ էլ որ փորը քաղցած լինի, Աստուծուն դիմելու համար մէկ ուրիշի միջնորդութիւնը կարիք չը կայ, թէկուզ լինէր այդ ուրիշը մի մեծատուն, բայց նա հեռանալով մեծատան դռնից երեք դէպքումն էլ ասում է. «չնորհակալ եմ, Աստուած չէն պահէ. . . . Աստուած պահէ որդիդ, Աստուած», և հեռանում է։ Բայց մենք գիտենք, որ աղքատի այդ խօսքերը ուրիշ միտք էլ կարող են ունենալ, այսինքն՝ «Աստուած քեզ էլ իմ օրիս հասցնէ, դեռ մի բան էլ աւելի»։

Ո՞ր Ճնաց տաճկահայոց խնդիրը։ Զարմանալի դիպուածներ. երկու միմեանցից հեռու և հակառակ ծայրերը նմանվում են միմեանց։ Արեւելեան խնդիրը յուզուեցաւ, իւր սկիզբն առաւ հերցեգ-բօսնիացիների խնդրով, որոնք Թիւրքիայի պետութեան արեւմտեան ծայրումն են, հիմա արեւելեան խնդիրը հանգչում է Թիւրքիայի պետութեան արեւելեան ծայրումը, հայերի խնդիրով։

Արեւելեան խնդիրը ուրիշն սկսում է հերցեգովինացիներից, բօսնիացիներից և վերջանում է հայերով։ Զարմանալի բան, ինչ՞ է լինի՞ Թէ ամեն բանում սկիզբը և վերջը բոլորովին նմանում են միմեանց։ Այդ երկիւղը մենք վաղուց քաղաքական տեսութիւնների մէջ յայտնել էինք։

Հայոց խնդրի ուր Ճնալու մասին տարակուսած հայ հասարակութեան ուշադրութիւնը դարձնում է իւր վերայ վիէննայի «Journal d'Orient»

խմբագրութիւնս խնդրում է այն բաժանորդներին, որոնք դեռ եւս չեն վճարած լրագրիս բաժանորդագինը, հասցնել այն փութով խմբագրութեանս։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

Հայոց խնդիրը և «Journal d'Orient»-ը։
Ազգային.— Թղթակցութիւնք Աղքսանդրապօլից, Մօսկուայից և Թիֆլիսից։
Քաղաքական.—Քաղաքական լուրեր։
Մեղուի հեռագիրներ,
Մանր լուրեր,
Յայտարարութիւններ։

ՀԱՑՈՑ ԽՆԴԻՐԸ ԵՒ «Journal d'Orient»-Ը 1
ՄԵՂՈՒԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ 3
ՄԱՆՐ ԼՈՒՐԵՐ 3
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ 4

ԴԱՇՏԱՅԻՆ

ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔԸ

(Վեպ «Գյուղատնտես» օրգանից)

ՍՈՒՐԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

13 հոկտեմբերի

Ս. Ա.

Ա

Ամառվա տաք մի օր էր։ Ես ու հայրս ցորենի հունձքն էինք անում։ Ես հնձում էի, հայրս հետևիցս գալիս, հասկերը հավաքում ու կապում։ Ես հնձում էի, որովհետև ինձ էին վստահել, հայրս հետևիցս գալիս, որովհետև ինձ չէին վստահ

1881 թվականի ՄԱՅԻՍԻ 30 ՀԱՅԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ Թիվ 98—4 էջ

ՀԱՅԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Ս. ԱՂԱՅԵԱՆ, 28 ՀՈՒՆՎԱՐԻ

Ս. ՂՈՒԿԱՍՈՎԻ

Ս. ՂՈՒԿԱՍՈՎԻ

Ս. ՂՈՒԿԱՍՈՎ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ներսիսեան դպրոցի ուսուիչաարա **ՄԻ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴ** տալիս է մանաւոր դասեր հայոց լեզուից, ռուսաց լեզուից և այլ առարկաներից ամենաչափաւոր վարձատրութեամբ. նմանապէս տալիս է ձայնից յետոյ և երեկոները կրկնողական դասեր և պատրաստում է աշակերտներին հայ միջնակարգ ուսումնարանների համար: Հասցէն կարելի է իմանալ «Մեղու Հայաստանի» լրագրի խմբագրատանը:

Ջ. Գրիգորեանցի գրախանութն ստացել է Բօտով—Տէր-Աբրահամեանի — **ՕՐԱՑՈՑՔ** 1882 թ: գինն է 15 կ.

ՎԻՃԱԿԱՅԻՆ ԿՕՆՍԻՍՏՕՐԻԱՆ ՀԱՅՈՑ վրաստանի և իմերեթի յայտնում է, թէ առանումը նշանակած է **ԱՃՈՒՐԴ** սոյն հոկտեմբեր ամսի 30-ին, առանց կրկնաձրդի, Օրթաճալայի այգին կապալառ տալու համար:

Մամուլի տակից դուրս եկաւ Հոկտեմբերի **«ԱՂՔԱՏ ՄԱՆՈՒԿ»** գրքոյկը, թարգմանութիւն Գ. Խաչատրեանցի և Գ. Տէր-Վահանեանցի: Գրքոյկը ծախվում է «Կովկասեան» և «Կենդրոնական» գրավաճառանոցներում: Հատով գնողների համար գինն է 20 կոպէկ, իսկ գումարով գնողներին զիջում կը լինի, եթէ գիմեն ուղղակի հեռագրով. Тифлисъ. На Авлабарѣ, Григору Матинянцу. 5—5

ՀԱՇՈՒԱՊԱՀ

Որ գիտէ հասարակ, կրինակի իտալական, անգլիական և երրեակ ռուսաց հաշուապահութիւն կամենում է դասեր տալ: Հարցնել Թիֆլիզի կազէօնի պալատում Յակովբ Տէր-Յակովբեանցին, կամ սուրբ Նշանի փողոց, սեպհական տուն № 17: 6—6

Լոյս տեսաւ երևելեան **ԼՕՏՕ**, Ջիվխիսու բնալական ուսումնարանի հայ-աշակերտների հրատարակութեամբ: Վաճառվում է (յոգուտ նոյն դպրոցի աշակերտաց ապագայ **ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ**) Կովկասեան, Կենդրոնական գրավաճառանոցներում և Կուկիայի կամրջի վերայ պ. Մասեհեանցի խանութում: Գինն է 50 կոպ:

Ներսիսեան դպրոցի **ԵՕԹՆԵՐՈՐԴ ԴԱՍԱՏԱՆ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՑ** մէկը, առաջիկայ ուսումնական տարուայ շրջանում, կամենում է **ԿՐԿՆՈՂԱԿԱՆ** (репетиціонный) **ԴԱՍԵՐ** ունենալ տների մէջ: Նոյնպէս պատրաստում է աշակերտներ և աշակերտուհիներ հայոց ուսումնարանների բոլոր դասատուց համար: Հասցէն հարցնել դպրանոցի տեսչի օգնական՝ պ. Ամիրան Մանդինեանցին:

ԳՈՐԾԱՐԱՆ ԿԱՇԻՈՅ

Ց. Կ. ՊԱՐՈՆԵԱՆ.

Ի քաղաքին Խարասուբազարի Տաւրիկ նահանգի.

Պատիւ ունիմ յայտնելու յարգոյ հասարակութեանը իմ հնգետասնամեայ փորձը ցոյց տուած և մաքրված ֆրանսիական մէթոտով պատոչ և մնքենաների կաշի պատրաստելու յաջողցաւ և ես այդ արհեստը կատարելագործեցի և կաշին համեմատաբար աժան գիներով եմ վաճառում. վասն որոյ կ'ընդունիմ պատուէրներ և ամենամեծ ճշդութեամբ կը պատրաստեմ և առանց յետաձգութեան կ'ուղարկեմ ռուսական ընկերութեան գրասենեակի ձեռքով (через контору русскаго общества) որոյ համար բաւական է միայն կանխապէս ուղարկել տասներորդ մասն արժէքին, կաշւոյն կապը կը բաղկանայ 20 կէսերից, այս ինքն 10 ամբողջ կաշուց, որոյ գինն է 8 փութի չափ: Այժմեան տեղական գինն է 24 ռուբլի: Յանկացողները կարող են դիմել ինձ հետեւեալ հասցէով: Кожевенное заведеніе О. Ѳ. Баронову. Въ Г. Карасубазарѣ, Таврич. губ.

«ՀԱՅՈՑ ԲԱՐԲԱՌՆԵՐԻ» խնդրի մշակութը առաջ տանելու և իր նպատակին հասցնելու համար՝ դեռ ևս ժողովում ենք փոխադրութիւններ այս տարուայ «Փորձ»-ի II համարում հրատարակուած մեր հինգ առաջադրութեանների մասին.—Միևնոյն տեղից կարելի է ուղարկել մի քանի փոխադրութիւններ: Հրատարակում ենք սորա վերայ այն աննն անձանց ուշադրութիւնը, որոնք ցանկանում են մեր մտնուկ գրականութեան զարգացումն և կարող են օգնել մեզ այս գործում.

Ց. Նազարեանց.

2—8

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ Գ. Սունդուկեանի **„ԽԱԹԱԲԱԼԱ“**

Ջորս գործողութեամբ և վեց պատկերով

ԿՕՄԵԴԻԱՆ

Ծախվում է Թիֆլիզում «Կենդրոնական» և «Կովկասեան» գրավաճառանոցներում:

Գինն է 50 կոպէկ:

Վիճակային կօնսիստորիայն Հայոց վրաստանի և իմերէթի յայտնում է, թէ սոյն հոկտեմբերի ամսոյ 30-ին նշանակված է ամուրդ, առանց կրկնաձրդալուսու թեան, Ախալքալաքի եկեղեցական գերեզմանոցի վրայ շինած ցորեան և գարին վաճառելոյ համար: Յանկացողները կարող են գիմել եկեղեցական կալուածոց կառավարչացը Խորէն աւագ քահանայ Բարսեղեանցին և պ. Յովակիմ Գեղամեանցին Ախալքալաք քաղաքում:

ՀԱՆՔԱՅԻՆ ԲԱՂԱՆԻՔ

(Երեւան տէրութենական, բաղանիքների փողոցի վերայ իշխան Բէհբութեանների բաղանիքից վերև):

ԻՎԱՆ ՄԻՆԱՍԵՎԻՉ ՄԻՐԶՈՅԱՆՑԻՑ—ՈՐԴՈՅ: Ներկայ հոկտեմբեր ամսոյ 22-ին հիմնադրեի եղաւ բացումն նոր շինուած բաղանիքի հասարական—արական և իգական—նոյնպէս և առանձին համարների: Առանձին համարների գինն է 80 կոպ. և 1 ռուբլի ժամը. ընտանեկան համարի գինն է ժամը 1 ռ. 50 կոպ.: 2—3

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿԻՑ

Փիլիսոփայական, ժողովրդապրակական և քաղաքական

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Ձեռնարկ—Հայ տղայոց և օրիորդաց ուսուցչարանների համար. աշխատասիրութիւն Ա. Հաճիքի Տէր-Յակովբեանցի, գինն է 60 կոպէկ:

Յանկացողք առնելոյ պէտք է դիմեն Тифлисъ. «Центральная книжная торговля». կամ «Кавказская книжная торговля» և կամ աշխատասիրողին ներսիսեան ուսուցչարանում:

Ծանօթ. Հայաստանի քարտէզի առաջի տպագրութիւնը անյաջող անցաւ ձեռնարկողի երկարող տպագրութեան և մինչև մի քանի օրը պատրաստ կը լինի:

Ա. Հաճիքի Տէր-Յակովբեանցի:

Մամուլի տակն է և շուտով լոյս կը տեսնի Ս. Մանդինեանի հետեւեալ աշխատութիւնը, «**ԿԵՆԴՐԻ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏ ԹՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ**». Ծրագիրն դպրոցների 4-րդ տարուայ դասարնացք և միջնակարգի 1-ն, 2-դ և 3-դ տարիների համար հրատարակ:

ԸՆԹԵՐՑԱՐԱՆԻՍ վարձատիրը պատիւ ունի յայտնելու հայ հերիաթներն և գրավաճառներին՝ որ նորա բարեհաճեին իրաքանչիւր նոր տպված հերինակութիւններից մի մի օրինակ ուղարկել ընթերցարանիս ատեան, որի վճարը՝ եթէ նուիրված չէ, ընթերցարանիս վարչութիւնը պարտ կը համարի անյապաղ հասցնել նոա պատկանելոյն:

Տնօրէն ընթերցարանի՝

Բժ. Արամեանց.

Ս. Բրդէն սկսել եմ թարգմանել ДѢТСКАЯ БИБЛІОТЕКА. «ФЕЛИКСЪ или ВЕЛИКОДУШНЫЙ ЮНОША» գրքոյկը. խնդրում եմ այն անձանց, որոնք պատրաստ են մանկական գրքեր հրատարակելով կամ թարգմանելով, բարեհաճին յայտնել լրագրով, այս գրքի հայերէն թարգմանուած լինելը կամ չլինելը:

Վարդան Եփափարեանց.

Ներկայումս լոյս տեսաւ և վաճառվում է Կենդրոնական գրավաճառանոցում **ԳՐԱԲԱՌԻ ՀՈԼՎՈՒՄԸ** մի պիւսակի մէջ գործնական և գիտակցական ուսումնասիրութեան համար: Գինն է 15 կոպէկ:

ОБЪ ИЗДАНІИ,

ВЪ 1882 ГОДУ ВЪ Г. ТИФЛИСѢ ЕЖЕНЕДѢЛЬНАГО ЮРИДИЧЕСКАГО ЖУРНАЛА.

„ЮРИДИЧЕСКОЕ ОБОЗРѢНІЕ“

(ГОДЪ ВТОРОЙ).

Журналъ какъ и въ 1881 году будетъ выходить по четвергамъ въ размѣрѣ до 2 печатныхъ листовъ текста, кромѣ приложеній по прежней программѣ, въ объемѣ которой входитъ статьи пи всѣмъ вопросамъ, вытекающимъ изъ теорій и практики права и судопроизводства, перечень, изложеніе и обсужденіе важнѣйшихъ распоряженій и узаконеній правительства, краткіе отчеты (а въ случаяхъ важныхъ и стеографическіе) о выдающихся судебныхъ дѣлахъ, особенно интересныя гражданскія рѣшенія, случаи изъ судебной жизни и практики (смѣсь) корреспонденцій юридическаго содержанія, городская хроника, перечень новыхъ книгъ юридическаго содержанія и обзоръ печати, тезисы кассаціонныхъ рѣшеній: Правительствующаго Сената и Тифлисской Судебной Палаты, судебный указатель и пр.

Заботясь о посилномъ выполненій своей программы, журналъ заручился сотрудничествомъ, сверхъ многихъ лицъ судебнаго вѣдомства, также и нѣкоторыхъ профессоровъ—юристовъ.

Редакція журнала Тифлисъ, Ново-Бебутовская ул. д. № 6. Администрація (для пріема подписки, объявленій и розничной продажи). Тифлисъ, Сололакская ул., д. № 10. Подписная цѣна на журналъ, съ доставкою и пересылкою, на годъ 10 р. на 9 мѣс. 8 р. 20 к., на 6 мѣс. 6 р., на 3 мѣс. 3. р. 20 к. на 1 мѣс. 1 р 20 к. Разсрочка въ платежѣ денегъ по соглашенію съ администраціею журнала. Подписаться можно съ 1-го числа каждаго мѣсяца, и не далѣе конца года. Отдѣльные нумера по 25 коп. Объявленія, казенныя и частныя, по таксѣ за занимаемое мѣсто. Иногородныхъ просятъ обращаться исключительно въ Администрацію журнала.

Издатель А. С. Френкель. Редакторъ А. В. Степановъ.

Պատրաստ է տպագրութեան համար Սամուէլ Սմայլս անգլիացի մատենագրի

ԽՆԱՅՈՂՈՒԹԻՒՆՔ

Գրքին կցուած կը լինի նոյն հեղինակի «ինքնօգնութիւն» անունով գրքից ներկայ աշխատութեան հետ մեծ կապ ունեցող մի գլուխ «փողը և նորա լաւ և վատ գործադրութիւնը»:

Գիրքը բաղկացած կը լինի 400 երեսից «Փորձ»-ի գիրքով:

Գրքի տպագրութեան համար ստորագրութիւն է բացուած:

Բաժանորդագինն է ամեն տեղ 2 ռուբլի:

Իւրաքանչիւր բաժանորդ կը ստանայ անդորրագիր:

6—6

Մամուլի տակից դուրս եկաւ **ԹՓԶՈՒԿ** գործ Աֆթօգկէի Թ ա ր գ. Հ. Տէր-Մինաս այ է լ ե ա ն ց: Ծախվում է Կենդրոնական և Կովկասեան գրավաճառանոցներում **ՅՕԳՈՒՏ ԹԻՖԼԻՉԻ** բնալական ուսումնարանի հայ աշակերտների տպագայ **ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ**: Օտարաքաղաքացիք կարող են ուղղակի դիմել այս հասցէով. Въ Тифлисъ. Реальное училище г. Теръ-Микелову. 10—10

Արդէն թարգմանուած է և շուտով մամուլի տակ կը մտնի «ДВѢ ЕЛКИ» անունով մանկական գրքոյկը երևելի վաւէրագրի, որի գրուածքները Ս. Պետերբուրգի «Ֆրէօբէլեան» ընկերութիւնից մրցանակների են արժանացել: 5—10

Լոյս տեսաւ **«ՏԱՄԱՆ ՊԱՏԳԱՄԱՒՈՐ կամ ԲԱՐՈՅԱԿԱՆ ՊԱՐՏԱՒՈՐՈՒՆ»** կրօնական գրքոյկը. ա. գործ Արսէն քահանայի Բաղրատունի, և ծախվում է Կենդրոնական գրավաճառանոցում. գինն է 25 կոպ:

«ԹԻՖԼԻՍԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՀԱՅՑԵՐԷՆ ԳՐԱՏԱՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԱՆ» անցեալ տարուայ անդամները և ցանկացողները անպատճառ պատճառել կարող են գիմել ընկերութեան գանձապահ պ. Մովսէս Թաւադեանցին, Թիֆլիսի առևտրական բանկա անդամակցացած վճարը հատուցանելու և տոմսակ ստանալու:

Դուրս եկաւ մամուլի տակից Գ. Գ. ԱՂԱՅԵԱՆՑԻ մի նոր աշխատութիւնը:—

ԸՆԱՀԱՏՈՑ

ՀԻՆ ՋՐՈՑՑ ԸՆԹԵՐՑԱՍԷՐ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ. գինն է 50 կոպ: Յանկացողք կարող են գիմել մեզ մեր որպարանի հասցէով: Մովսէս Վարդանեանց: 7—7

ՄԵՐ ԳՐԻՉՆԱՐԱՆԻ

ԹԷՅԻ ՊՊ. ԳՈՐԾԱՒՈՐՆԵՐԻՆ

խնդրում ենք ուշադրութիւն դարձնել որ բանկերոլներն վերայ անպատճառ Կ. և Ս. (К. и С.) տառերը լինեն:

Կ. և Ս. Փոստմէդրայներ,

առևտրական տուն

Մոսկվայում.

ДОЗВОЛЕНО ЦЕНЗУРОЮ ТИФЛИСЪ 29-го Октября 1881 г.

Տպարան Մ. Ռոսթիմեանց և ընկ.